№ 10. Մարտի 15. — 1873 — Մարտի 15 № 10.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարազգաց-ի բաժանորդները պիտի գիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թէ Դիւանում կարելի է աստուածագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունեաց առն և պ. Փաստրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել ասուղը պիտի վճարվի 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոխատու ընկերութիւններ։—Ներքին տեսութիւն։ Փոխատու ընկերութիւնների կանոնադրութիւնը։ Նամակ Մեծ-Շուլավէրից։ Նամակ Խրքադրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հռոմի պապը և Եւրոպա։ Նամակ Կ. Պոլսից։—Խառն լուրեր։—Ազնտարական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նիկողայոս Կոպէրնիկ։

ՓՈԽԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Մշակի“ թէ անցեալ տարվայ, թէ ներկայ տարվայ ընթացքում մենք շատ անգամ խօսած էինք մեր յօդվածներում արդիւնաբերող (գիւղական և քաղաքային) դասի տնտեսական թշուառ դրութեան վրա, շատ անգամ յայտնած էինք իրողութիւններ թէ ինչպէս հարստահարումեն նրանց կապիտալիստներ։ Մենք չէինք թագնում, որ բոլորովին չենք համակրում այնպիսի հիմնարկութիւններին, ինչպէս օրինակ Փոխադարձ կրէդիտի ընկերութիւնը, որ գործիք էլ ինում հարուստների ձեռքում էժան կրէդիտ ստանալու և մասչելի չէ միջին և փոքր դասի արդիւնաբերողներին, շատ անգամ ընդհանուր և առաջնորդող յօդվածներով զրդռեցինք ընկերակցութեան միտքը, յարմարեցնելով նրան թէ գիւղական երկրագործ, թէ քաղաքի արվեստաւոր դասի պահանջներին և վերջապէս քանի մի անգամ աշխատեցինք ծանօթացնել ընթերցողին փոխատու ընկերութիւնների կազմակերպութեան հետ (տես. „Մշակ“ № № 9, 47 և այլն 1872)։

Մեր յայտնած տեսական մտքերը օդից վերցրած չէին, այլ դէպքերի մեծ մասում հաստատվում էին գաւառական նամակագրութիւններով և գործնական կեանքից առնված յօդվածներով...

Գիւղական ժողովուրդը իր արդիւնաբերածից ինքն լիապէս օգուտ չէ քաղում, որովհետև միշտ պարտապան է մնում ուներոր վաշխառուների... Նեղ ընկած ժամանակ գիւղացին կրէդիտի հարկաւորութիւն է զգում, բայց կարող է փոխ առնել մի յայտնի գումար միայն ահագին տոկոսներով ..։

Համարելով գիւղական փոխատու ընկերութիւնները միակ միջոց գիւղացուն էժան կրէդիտ առաջարկելու համար, մենք ընդհանրապէս խօսած էինք այդ հիմնարկութեան վրա, բայց յիշեալ հասարակական հիմնարկութեան բուն կազմակերպութիւնը անծանօթ էր մնում ընթերցողին։

Այժմ մենք հարկաւոր ենք համարում, մեր գրականական գործունէութիւնը այդ ուղղութեամբ շարունակելու, յիշեալ գաղափարը մշակելու և ժողովրդի մէջ նրան արմատացնելու համար, ներկայացնել այս համարի Ներքին տեսութեան մէջ Փոխատու ընկերութիւնների մինիսարութենից հաստատված կանոնադրութիւնը, որի օրինակով, այս կամ այն մասնաւոր փոփոխութեամբ տեղական պահանջներին յարմար, անթիւ ընկերութիւններ հիմնվեցան Ռուսաստանում։

Կանոնադրութեան այդ օրինակով, գարձեալ մացնելով այս կամ այն մասնաւոր և տեղական պահանջներին յարմար փոփոխութիւն, կարելի է հիմնել և քաղաքների արվեստաւոր դասի համար փոխատու ընկերութիւնները։

Ժողովրդի ստորին, աշխատող դասը, այսինքն գիւղացի երկրագործը և քաղաքացի արվեստաւորը իրաքանչիւր հասարակութեան հիմք և տնտեսական ոյժ են կազմում։

Նրանց դրութիւնը բարելաւացնելով կարելի է բարւոքել և ամբողջ հասարակութեան տնտեսական դրութիւնը։

Ի՞նչ կասէինք, եթէ մի երկրի ազգային լուսաւորութեան գործի մէջ վերանորոգութիւններ անելու ժամանակ, սկսէին համալսարանների և բարձր ուսումնարանների հիմնելուց, արհամարհելով ժողովրդական տարրական ուսումնարանները, որք ազգային լուսաւորութեան հիմք են ..

Նոյնպէս և տնտեսական կողմից, սորանման բռնած ընթացքը վնասակար և անբնական կը լինէր։

Քանի մի տարի է արդէն որ մեր կովկասեան հասարակութեան մէջ շարժում է նշմարվում հասարակութեան տնտեսական դրութիւնը բարւոքելու, հիմնելով կամ դիտաւորութիւն ունելով հիմնել զանազան բանկեր, ընկերութիւններ, բաժանողական ընկերակցութիւններ և այլն։

Մենք ընդէմ չենք այդ տեսակ հիմնարկութիւններին՝ հասարակական մի նոր օգտաւէտ հիմնարկութիւն յայտնվելուն պէս, մենք առաջիններից ենք լինում, որք ոչ թէ միայն ողջունում ենք, բայց և աշխատում ենք մեր համեստ խորհուրդներով մի յարմար ուղղութիւն տալ յիշեալ հիմնարկութիւններին...

Միայն թէ մեր կարծիքը այն է, որ հարկաւոր է միշտ սկզբից սկսել՝ նախ քան հիմնվիլին Առևտրական և Փոխադարձ կրէդիտի բանկերը (կամ գոնէ զուգընթաց սրանց հետ) պիտի մտածէինք հիմնել և հասարակութեան արդիւնաւոր, աշխատող դասի համար այնպիսի ընկերութիւններ, որք ներկայացնելով նրանց էժան կրէդիտը, ազատէին նրանց վաշխառուների ձեռքից, որոնցից կախված է նրանց ամբողջ տնտեսական գոյութիւնը և ուրեմն բարվոքէին նրանց դրութիւնը...

Այսուհետև, երբ ընթերցողը կը ծանօթանայ կանոնադրութեան օգնութեամբ փոխատու ընկերութիւնների կազմակերպութեան հետ, մեզ աւելի հեշտ կը լինի շարունակել մեր գրականական գործունէութիւնը յիշեալ տնտեսական գաղափարի վերաբերութեամբ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

Գիւղական փոխատու ընկերութեան կանոնադրութեան.

Ընկերութեան նպատակը։

Ընկերութիւնը հիմնվում է այն նպատակով, որ հնար տայ որ և իցէ տեղի բնակիչներին. 1) գումար փոխ առնել չափաւոր տոկոսով և 2) շահաւէտ կերպով յանձնել իր հաւաքած գումարը։

Ընկերութեան միջոցները։

§ 1. Ընկերութեան միջոցները բաղկանում են.

ա) Անդամների մասնաբաժիններից, որոնք կազմվում են նոցա տուրքից (տես § 2) և նոցա պատկանեալ շահերից, որոնք հասնելու են իրաքանչիւր անդամին ընկերութեան օգուտներից (տես § 3).

բ) Պատասխի գումարից, որ կազմում է հասարակաց սեփականութիւն և պատկանում բոլոր անդամներին. նորա կազմութեան եղանակը և նշանակութիւնը բացատրված են այս կանոնադրութեան § 6—9, և.

գ) Իրամաղլուխներից, որոնք փոխ է առնում ընկերութիւնը թէ կողմնակի անձանցից և թէ իր անդամներից զանազան ժամանակներով կամ առանց ժամանակ որոշելու։

ա) Անդամների մասնաբաժինները.

§ 2. Իրաքանչիւր անդամին պատկանած մասնաբաժնի ամենամեծ չափը նշանակվում է 100 ռուբլի, բայց այդ չափը կարող է աւելի մեծանալ նայելով ընդհանուր ժողովի վճռին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿՈՊԵՐՆԻԿԸ

Ներկայ 1873 թ. փետրուարի 19-ին Թորն քաղաքում կատարուեցաւ չորս հարիւր ամեայ յիշատակը այն մարդու ծննդեան, որ ամենից աւելի պատկանում է ամբողջ աշխարհին։ Այդ մարդը Նիկողայոս Կոպերնիկն է։ Գերմանիան և Լեհաստանը մինչև այժմ վիճում են միմեանց հետ այդ աստղաբաշխութեան հոր ծագման մասին. իրաքանչիւրը նոցանից իւրեան է սեփականում նորան։ Վէճը առաջ է գալիս նորանից, որ Թորն քաղաքը՝ Կոպերնիկի հայրենիքը, երկու հարիւր տարու չափ գտնուելով գերմանական ասպետների իշխանութեան տակ, 1410 թուի Ցոնէնբուրգի պատերազմից յետոյ, այլ ևս չը կարողանալով տանել ասպետների բռնութեանը ու ճնշող հարկերին, ապստամբեցաւ ու այժմեան արքունական Պրուսիայի ուրիշ քաղաքների հետ ինքնակամ մտաւ Լեհացւոց Կազիմիր IV թագաւորի իշխանութեան տակ։ Չը նայելով այդ փոփոխութեանը, երկրի մէջ տիրում էին դեռ ևս գերմանական լեզուն, սովորութիւնները, օրէնքները, կառավարութեան եղանակը մանաւանդ պաշտօնական տեղերում, որոնք համարեա միայն գերմանացւոց ձեռքն էին և որոնց կարգին իւր ծագումով պատկանում էր Կոպերնիկը. բացի դորանից նորա մօտիկ ազգականները գերմանացիք էին. նա ինքը խօսում էր գերմաներէն։ Իսկ Լեհացիքը իւրեանց իրաւասութիւնը հիմնում էին նորա վերա, որ նորա ծնընդեան ժամանակ Թորն քաղաքը արդէն եօթը տարի էր, որ նոցա իշխանութեան տակ էր և Կոպերնիկը Կրակովի համալսարանում, ուր այնտեղի սովորութեան համեմատ չորս ազգութիւններից մինի մէջ պէտք է գրուէր, նա գրուեց Լեհացւոց կարգում։

Լեհացի թէ գերմանացի Կոպերնիկը իւր գիտերով համաշխարհական մարդ դարձաւ, ուրեմն աւելորդ չի լինել այստեղ նորա համառօտ կենսագրութիւնն անել։

Ցասն և չորորդ տարու վերջերում Կոպերնիկեան տունը Բօհեմիայից կամ Վենգրիայից վերաբնակուեցաւ Կրակով և յետոյ Թորն։ Այդ տանը պատկանող Նիկողայոս Կոպերնիկը, որ մի ունեւոր և երևելի վաճառական էր և մի ևնոյն ժամանակ վարում էր Թորն քաղաքի դատաւորի պաշտօնը, ամուսնացաւ մի գերմանացի աղջկայ՝ Բարբարայ Վացելրոդէի հետ։ Այդ ամուսնութենից 1473 թ. փետրվարի 19-ին ծնաւ նոյն քաղաքում Նիկողայոս Կոպերնիկը։ Ցասն տարեկան հասակում պատանի Կոպերնիկը զրկուեցաւ իւր հօրից և նորա ու նորա եղբօր Անդրէասի հոգացողութիւնը յանձնուաւ նոցա մօրեղբայր Ղուկաս Վացելրոդէ։ Ցասն և ութ տարեկան հասակում նա մտաւ Կրակովի համալսարանը, ուր ուսանում էր աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն, մի ևնոյն ժամանակ և հին լեզուներ, բժշկութիւն և մաթեմատիկա։ Կոպերնիկը չորս տարի անցկացրեց այստեղ ամենածանր աշխատանքի մէջ. յետոյ, չը նայելով որ նորա մօրեղբայրը լաւ տեղ էր ճարել նորա համար Ֆրաուէնբուրգում, նա գնաց Իտալիա և շարունակեց իւր ուսումը Բոլոնիայի և Պադուայի հռչակաւոր համալսարաններում։ 1499 թ. նա ստացաւ աշխարհագիտութեան և բժշկութեան դոկտորի աստիճան։ 1500 թ. նա արդէն մաթեմատիկայի պրոֆէսսոր էր Հռոմում, որ նա չուտով թողեց, յայտնի չէ, թէ ինչ պատճառով։ 1503 թ. նա վերադարձաւ Ֆրաուէնբուրգ և այլ ևս չը թողեց իւր հայրենի հողը։ Բացի մի քանի ժամերից, որ նա չէր ինայում նորա կանչող հիւանդներին օգնելու համար, նա իւր բոլոր կեանքը նուիրեց երկնային մարմինների և մանաւանդ մոլորակների քննութեանը։

Մենք տեսնում ենք, որ ամէն առաւօտ արևը բարձրանում է արևելքից և մայր է մտնում արևմուտքում, նոյնպէս և լուսին ու աստղերը ամէն գիշեր մի և նոյն տեսակ շարունակում են իւրեանց ընթացքը։ Ով կարող է հակառակել իւր աչքին։ Այդպէս ամբողջ հին գարերը համոզված էին, որ երկրագունտը անշարժ կանգնած է մէջտեղը, իսկ երկինքը իւր բոլոր մարմիններով պտտում է նորա չուրջը։ Այդ կարծիքը իբրև գիտութիւն հաստատուեցաւ Պտղոմէոսից Քրիստոնէութեան երկրորդ դարում։ Եկեղեցին ևս մի քանի բառական նմանութիւն գտնելով այդ ուսման և Աստուածաշնչի քանի մի խօսքերի մէջ (արևի ծագելը, մայր մտնելը, երկրի անշարժութիւնը, արևի շարժումը և այլն), հաստատեց այն։ Ուրեմն, չընդունել այդ համակարգութիւնը նշանակում էր հակառակել իւր սեփական աչքերին, երկար ու ձիգ տարերի աւանդութեանը և եկեղեցւոյ հազար ամեայ վարդապետութեանը։ Դորա համար մեծ քաջութիւն և համոզմունքի հաստատութիւն էր հարկաւոր։

Այդ դժուարութիւնը կրկնապատիկ աւելանում է եթէ ուշադրութիւն դարձնենք այն ժամանակուայ աստեղագիտական գործիքների անկատարութեան վերա. այն ժամանակը չը կար դեռ ևս հեռադիտակը, որ միայն 1600 թուի ժամանակները հնարուեցաւ. երեք փայտի ճիպոտներից նա պատրաստեց իւր համար մի գործիք աստղերի դրութիւնը որոշելու համար։ Այդպիսի թերակատար միջոցներով, բայց անխոնջ հոգով ձեռք զարկեց Կոպերնիկը իւր քննութիւններին Բալթեան